

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի****2021թվականի բյուջեի 9 ամսվա կատարողականի վերաբերյալ****Եկամուտներ**

Համայնքի 2021թ. 9 ամսվա բյուջեի եկամուտների /վարչական և ֆոնդային բյուջեները միասին/ պլանը կատարվել է 100.5%-ով: 604312.6 հազ. դրամ պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 607304.9 հազ. դրամ, գերակատարումը կազմել է 2992.3 հազ. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի գծով առկա է 3982.2 հազ. դրամ եկամուտների թերակատարում, ֆոնդային բյուջեի գծով 6974.5 հազ. դրամի չափով գերակատարում:

Նախորդ՝ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ համայնքի բյուջեն գերակատարվել է 16.2%-ով, կամ ավել եկամուտները կազմել են 84462.9 հազ. դրամ:

2021թ. 9 ամսվա բյուջեի վարչական մասը կատարվել 99.3%-ով / պլան՝ 546511.8 հազ. դրամ, փաստացի՝ 542529.6. դրամ/: 2020թ. համեմատությամբ բյուջեի վարչական մասում ավել եկամուտները կազմել են 68854.5 հազ. դրամ կամ վարչական բյուջեի եկամուտները 2020թ. համեմատությամբ ավելացել են 14.5%-ով: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 97.6%-ով / պլան՝ 166500.0 հազ. դրամ, փաստացի՝ 162517.8 հազ. դրամ /: Նախորդ՝ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները գերակատարվել են 16.4%-ով, կամ սեփական եկամուտների հավաքագրումը ավելացել է 22899.4 հազ. դրամով:

Վարչական բյուջեի եկամտատեսակների գծով նախորդ տարվա համեմատությամբ թերակատարվել են հողի հարը / 6.1% /, տեղական տուրքերը պակասել են 22.5%-ով, ոչ հարկային եկամուտները՝ 2478.1 հազ. դրամով:

Գույքահարկի և պետական տուրքերի մասով առկա է գերակատարում ընդհանուր 23102.0 հզ. դրամի չափով:

2021 թ. հունվարի 1-ին գործողության մեջ է դրվել անշարժ գույքի հարկը, որը միավորել է նախկին գույքահարկը և հողի հարկը, ինչպես նաև առանձնացվել է փոխադրամիջոցների գույքահարկը ֆիզիկական և իրավաբանական անձանց մասով: Չնայած առկա բազմաթիվ անճշտություններին՝ ներդրված նոր ծրագրերն աշխատում են անխափան, զուգահեռ աշխատում է նաև գույքահարկերի և հողի հարկի նախկին ծրագրերը:

Համայնքի վարչական բյուջեի թերակատարման պատճառը օբյեկտիվ և սուբյեկտիվ չվճարումներն են՝ կապված առկա աշխատանքային հարաբերությունների հետ:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել է 104.1%-ով / ճշտված պլան՝ 168800.8.հազ. դրամ, փաստացի՝ 175775.3 հազ. դրամ /: Նախորդ՝ 2020թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի փաստացի եկամուտներն ավելացել են 122108.4 հազ. դրամով կամ 2.2 անգամ: Ֆոնդային բյուջեի գերակատարման հիմնական պատճառը հանդիսանում վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե գումարների հատկացումը 111000.0 հազ. դրամի չափով:

2021թ. ստացվել և ծախսվել է 2020թ. համար նախատեսված 29000.8 հազ. դրամի սուբվենցիան:

Հողի հարկ և գույքահարկ

Համայնքի եկամուտների կենսունակ աղբյուրը իրավաբանական և ֆիզիկական անձանց հողի, գույքահարկի հարկման գործընթացից գոյացող գումարներն են: Այս ոլորտը կարիք ունի անընդհատ վերանայման՝ հարկման բազայում անհրաժեշտ փոփոխությունների ներառմամբ, համայնքում գործող ստորաբաժանումների հետ մշտական աշխատանքի միջոցով:

Համայնքի վարչական տարածքում գտնվող գույքահարկի 9 ամսվա պլանը նախատեսված է եղել 100050.0 հազ. դրամ: Հավաքագրումը կազմել է 83155.2 հազ. դրամ /83.1% /: Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկի հավաքագրումը, ըստ պլանային թվի, եղել է 6450.0 հազ. դրամ: 2021թ-ին հավաքագրվել է 4471.1. դրամ /69.3%/: Միավորված գույքահարկի և հողի հարկի՝ անշարժ գույքահարկի հարկի պլանը կատարվել է 48.7%-ով /:

Առևտրի, սպասարկման և քաղաքաշինության գծով տեղական տուրքերի՝ պլանավորված 5250.0հազ. դրամի դիմաց կատարողականը կազմում է 5024.0հազ. դրամ:

Պետական տուրքի գծով նախատեսված 4500.0հազ. դրամի դիմաց մուտքագրվել է 8059.9հազ. դրամ /179.1 % /:

Ծախսեր

Հիմք ընդունելով եկամուտների կատարման ցուցանիշները՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի 2021թ. 9 ամսվա բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 97.3%-ով: 592500.8 հազ. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 576638.8 հազ. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 15862.0 հազ. դրամ, կամ 2.7% :

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 97.9%-ով (պլան՝ 546500.0 հազ. դրամ, փաստացի 534762.6 հազ. դրամ), թերակատարումը կազմել է 11737.4 հազ. դրամ: Վարչական բյուջեի փաստացի ծախսերի 43.5%-ը կամ 231940.3. դրամ կազմել են կրթության և մշակույթի ծախսերը, 85412.3 հազ.դրամ կամ 16.0%-ը ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները՝ 94100.1հազ. դրամ կամ 17.6%-ը կամ կազմել է սանիտարական մաքրման ծախսեր և այլն:

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2021թ. 9 ամսվա բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով՝ կրթության ծախսերը՝ 98.4 % , մշակույթի ծախսերը՝ 93.2%:

2020թ. համեմատությամբ 2021թ. վարչական բյուջեի ծախսերը ավել են կատարվել 91672.6 դրամ կամ 20.7%-ի չափով:

2021թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել են 97.4%-ով (պլան՝ 157000.8 հազ. դրամ, փաստացի ծախս՝ 152876.2 հազ. դրամ): Նախորդ՝ 2020թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի գծով ավել ծախսերը կազմել են 76042.8 հազ. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ ֆոնդային բյուջեի ծախսերը ավելացել են 99.0%՝ ինչը պայմանավորված է վերը թվարկված այն է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե գումարների հատկացման հետ:

Համայնքի 2021թ. ֆոնդային բյուջեից վճարվել է ընդհանուր 113655.7 հազ. դրամ ասֆալտապատման, փոսային հիմնանորոգման համար, կապված ինչպես համայնքայի ծրագրերի կատարման, այնպես էլ համայնքի բյուջեի հաշվին կատարվող փոսային հիմնանորոգումների հետ այդ թվում նաև 2020թ.-ի պարտքերի վճարման հետ

Պարտքեր

2021թ. հունվարի 1-ի դրությամբ պարտքերը եղել են 33900.0 հազ. դրամ:

Բյուջետային գործառնություններից դուրս պարտքեր չկան: 2021թ-ի ընթացքում մարվել է 15400.0 հազ. դրամ պարտք, այդ թվում՝ 10500. հազ. դրամ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների մասով:

2021թ. հուլիսի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի պարտքը կազմում է 18500.0. դրամ, այդ թվում՝ 17300.0. դրամը՝ համայնքի ֆոնդային բյուջեի գծով 2014-2016թթ-ից տեղափոխված ասֆալտապատման աշխատանքների համար պարտքեր: